

Հողագործի ամսական



Պիեռ ՄԱՐՏԵՆ

Շատերը կենդանիների մեջ տեսնում են միայն իրենց թշնամիներին: Մարդիկ սարսափում են այն ամենից, ինչ թռչում ու սողում է, և նրանց մեջ ցանկություն է առաջանում ճզմել այդ «սողկալի կենդանիներին»:

Անկասկած կենդանական աշխարհում կան բազմաթիվ թալանիչներ, որոնք հարձակվում են ինչպես հենց իր՝ մարդու, այնպես էլ նրա ստեղծած բարիքների և աճեցվող կուլտուրաների վրա: Ամենից առաջ դրանք վնասակար կրծողներն են ու միջատները, առնետները, անտառային և դաշտային մկները, փափկամորթների որոշ տեսակներ:

Այս բոլոր պարազիտներն օժտված են բազմաճյուղ արտակարգ ընդունակությամբ: Եթե իրենց բեֆով լինի նրանք ամենաուշը մեկ տարում կլցնեն ամբողջ երկրագունդն ու կվերածեն այն մի այնպիսի անապատային մոլորակի, որպիսին լուսինն է: Այդ ինչպե՞ս է, ուրեմն, որ մինչև այժմ դա տեղի չի ունեցել: Պետք է խոստովանել, որ դա միայն մարդու շնորհքը չէ: Նա միայն առանձին դեպքերում է սահմանափակում այդ վարձագումը:

Բնությունն իր պատճառած չարիքի հետ հավասար օժտված է նաև պայքարի միջոցներով: Պարազիտների հետ միաժամանակ բնությունը ստեղծել է էակներ, որոնք ապրում են նրանց հաշվին: Այդ էակներն օր ու գիշեր անդադար պայքար են մղում:

Մարդու և, ամենագլխավորը, հողագործի այդ անհայտ դաշնակիցների մասին է, որ ուզում ենք պատմել մեր ընթերցողներին: Երբ մարդիկ սովորեն ճանաչել ու պահպանել իրենց դաշնակիցներին, գուցե այն ժամանակ, եթե չսիրեն, ապա թերևս հոգատար վերաբերվեն նրանց նկատմամբ:

Մարդկային աշխատանքի պետությունների առավել հայտնի պաշտպանները թռչունների մեջ են հանդիպում և նրանց օգտակարությունըն այժմ արդեն ոչ որ չի ժխտում:

Օգնականներ կան նաև միջատների մեջ (որոնց բոլորին սխալմամբ համարում են վնասակար), երկկենցաղների և սողունների մեջ (որոնք սովորաբար միայն վզվանք են առաջացնում) և վերջապես կաթնասունների մեջ (որոնց մասին հաճախ անտեղյակ են, կամ, որոնց արհամարհում են):

Միջատներ, սարդեր և որդեր

Սրանց օգտակար տեսակների թիվը հասնում է հազարների:

Մենք կնշենք դրանցից առավել հայտնիներին կամ այնպիսիներին, որոնք ավելի հեշտ են դիտվում և, որոնց օգտակարությունը հարյուր տոկոսանի է:

Ամեն որ ճանաչում է վատիկին: Բոլորը, նույնիսկ երեխաները սիրում են նրան: Եվ այսպես, մեր պատմությունը սկսենք վատիկից: Ոչ նրա համար, որ այն կարոտ է

հատուկ պաշտպանության, այլ նրան ավելի լավ ծանոթացնելու և տված օգուտն ավելի բարձր գնահատելու համար:

Գոյություն ունեն վատիկի բազմաթիվ տեսակներ: Նրանք իրարից տարբերվում են չափերով, գույնե-



րով և մեջքի վրա եղած բծերի քանակով: Նրանք բոլորն էլ ունեն նույն ապրելակերպը և սնվում են միևնույն կերով, որի շնորհիվ էլ այդքան օգտակար են: Զատիկները սնվում են ուտիճներով՝ այգեգործների ամենաոխսերի թշնամիներից:

Ջատիկն օրական հապարավոր ուտիճների է ոչնչացնում. հարձակվելով նրանց հոծ շարքերի վրա, իր ստորին ծնոտներով մեծ ավերածություններ է կատարում:

Բայց հասուն վատիկից ավելի օգտակար՝ նրա թրթուրն է, որին շատ քչերն են կարողանում ճանաչել: Նա փոքր-ինչ մեծ է վատիկից և հիշեցնում է վատահամբավ կոլորադայան բզեզին: Թրթուրը նման է մոխրագույն պարույրի, օժտված է օղավոր մաշկով և վեց թաթիկներով:

Երբ թրթուրը դուրս է գալիս ձգվից, նրա կշիռը հապիվ մեկ միլիգրամի է հասնում, բայց իր արտակարգ ախորժակի շնորհիվ շատ արագ աճում է: Նրա «կերակրացանկը» բաղկացած է գլխավորապես ուտիճներից, որոնց նա խժռում է անհամար քանակությամբ: Սովորեք, ուրեմն, ճանաչել ու պահպանել այդ թրթուրները: Միայն մի շփոթք նրանց այլ, վնասակար թրթուրների հետ: Եթե դուք տեսնեք վատիկի թրթուրներ, տարեք դրանց այգի և դրեք ուտիճներով վարակված բույսերի վրա: Այդ պարագիտները շատ շուտով կոչնչանան:

«Ոսկեաչիկը» կամ «ուտիճների առյուծը», ինչպես անունն ինքն է ասում, ոչնչացնում է պարպիտ-



ներին: Անկասկած, դուք ճանաչում եք ոսկեաչիկին: Նա մեկն է այն միջատներից, որոնք էլեկտրական լույսից շլացած մտնում են մեր բլենակարանները: Ամռան կամ աշնան հիանալի երեկոներին հաճախ կարելի է տեսնել լամպի շուրջը ոչ ճարպիկ պտույտներով թռչող մի-

ջատների՝ թորշոմած ու զապի պես թափանցիկ երկար թևիկներով: Դա հենց ոսկեաչիկն է: Հաճախ նա նստում է պատին կամ ապակուն, և այն ժամանակ երևում է նրա ամբողջ բաց կանաչագույն մարմնիկը՝ թափանցիկ թևիկներով, փոքր գլուխիկով և մեծ ոսկեփալ աչքերով: Այդ աչքերի շնորհիվ էլ նրան այդպես են անվանել: Իսկ նկատի ունե-



նալով այն կոտորածը, որ կատարում են նրանց թրթուրները ուտիճների մեջ, դրանց տվել են նաև «ուտիճների առյուծ» մականունը:

Ոսկեաչիկը, ինչպես և այդ տեսակին պատկանող մյուս միջատները արժանի են մեր պաշտպանությանը: Բոլորին էլ կարելի է ճանաչել չորս երկար ու թափանցիկ թևիկներով և ուղղաթիփի թռիչք-հիշեցնող թռիչքով: Նրանք ոչնչացնում են վնասակար միջատներին: Հատկապես աչքի է ընկնում մըրջնառյուծը, որն իր երկարավուն ձևով նման է ճպուռին: Մըրջնառյուծի թրթուրը ավալի մեջ փորում է ծագարներ և սնվում դրանց մեջ ընկնող մըրջյուններով:

Ինչ վերաբերում է ճպուռներին, որոնք, շնորհիվ իրենց նրբագեղության, արժանացել են «մադմուպել» մականվանը, ապա պետք է ասել, որ սրանք նույնպես մարդու օգնականներն են:

Նրանք մեծ մասամբ լինում են ջրային տարածությունների մոտերքում կամ խոնավ վայրերում, ուր տարվելով որսով, մեծ ավերածություններ են կատարում մոծակների, ճանճերի և բռեխների մեջ: Ճպուռի խոշոր աչքերը կապմված

են 25000 նիստերից, որը թույլ է տալիս միաժամանակ նայելու բոլոր ուղղություններով: Փորձեք մոտենալ բույսին նստած ճպուռին ետևից. դա մեկ երբեք չի հաջողվի:

Իր աչքերի՝ այդ իսկական ռադարների շնորհիվ, որոնք կատարում են հորիզոնը հետախուզողի լուրահատուկ դեր, անընդհատ թռիչքի մեջ գտնվող ճպուռը մի ակնթարթում նկատում է իր զոհին և կլետուկ կերպով նետվելով վերջինի վրա խժռում է նրան: Դրանից հետո ճպուռը շարունակում է իր անխոնջ դիտումները՝ թռչելով լճերի ու ճահիճների վրայով: Հաշվված է, որ մի ճպուռը 30 րոպեում կարող է կուլ տալ 30. ճանճ:


Ճպուռի թրթուրը բնակվում է ջրի խորքերում: Նա օժտված է վեց թաթիկներով և հասուն միջատ հիշեցնող գլխիկով: Այդ տարօրինակ էակը, որը շատ ավելի անկշտում է քան ինքը ճպուռը, սնվում է սղլ-րուկներով, փափկամորթներով և մոծակների թրթուրներով:

Պահպանեք, ուրեմն, այդ նապելի ճպուռներին, որոնց գեղանի թռիչքը ոչ միայն պարզարում է մեր ջրերը, այլև մշտապես պահպանում դրանք թռչող պարպիտներից: Մարդկանց ու ընտանի կենդանիներին մեծ տհաճություն պատճառող



այդ միջատները ընդունակ են դառնալու վտանգավոր հիվանդությունների տարածողները:

Բնության վարդերից մի ուրիշն է լուսատիկը, որը նույնպես կատաղի գիշատիչ է: Բոլորը ծանոթ են նրա թույլ կանաչավուն փայլին, ամռան խաղաղ երեկոներին նա երևում է պսպղուն կետի ձևով: Բայց մեծ հիասթափություն կապի նա, ով փորձի լուսի տակ նայել ֆանտաստիկական լապտերիկի կրողին: Այն ներկայանում է սև, փափուկ թրթուրի տեսքով, որի մարմինը բաժանված է հավասար օղակների:



Եվ, այնուամենայնիվ, գիտնականները այդ միջատին դասել են կարծրաթևավորների խմբին: Սրա մեջ են մտնում նաև վատիկն ու մալիսյան բլեզը, որոնց թաղանթաթեվերը պաշտպանվում են հենարան հանդիսացող երկու թևերով: Բայց ինչո՞ւ են լուսատիկին դասում այդ խմբին, եթե նա թևեր չունի:

Իրականում լուսատիկ կոչվածը (արտաբուստ նա որդի է նման) բնության տարօրինակ ֆանտապիայի արդյունքն է՝ այն նույն միջատի էգը, որն օժտված է թևերով: «Մահամը» դատապարտված է սողալու, իսկ «մուսյեն» սլանում է երկինք: Բայց, կարող են ասել, թե այդ ինչպես է՝ արուն վայելում է օդում թռչելու հաճույքը, իսկ էգը համեստ կյանք է վարում երկրի վրա. չէ որ նրանք երբեք չեն հանդիպի: Բարեբախտաբար դա այդպես չէ, հավառակ դեպքում բնության մեջ լուսատիկներ չէին լինի:

Էգի ֆիզիկական այդ պակասությունը վարձատրելու համար

բնությունը նրան օժտել է այդ փորձիկ կանաչ լապտերիկով, որը պնդվում է բանաստեղծներին: Այդ ֆուսֆորային լուսի միջոցով արուն հեռվից, թռիչքի պահին նկատում է իր սրտի ընտրյալին և սլանում դեպի նա:

Բայց միայն իր վարմանալի վարքագծի համար չէ, որ լուսատիկն արժանանում է մեր ուշադրությանը. դրանից առավել մեկ հետաքրքրում է նրա սնունդը: Այդ միջատը և, գլխավորապես, նրա թրթուրը, որը վարմանալիորեն նման է էգին, սնվում են խխունջներով՝ այգեգործի այդ երդվյալ թշնամիներով: Ուրեմն ջանանք, որ լուսատիկները միշտ լինեն բանջարեղենի դրացիները, նրանք կոչնչացնեն պարավիտների և գիշերները կփայլվեն իրենց խորհրդավոր ցուրով:

Գնայուկները (գիշատիչ բլեզներ) նույնպես սնվում են խխունջներով: Գնայուկների շարքը կարելի է դասել խլրդածորդիներին (իշխառան), մալիսյան բլեզներին և նրանց թրթուրները: Դա նշանակում է որ գնայուկը, ավելի քան որևէ մեկը, արժանի է մեր երախտագիտությանը: Բայց և այնպես շատերին թվում է, թե իրենք բարի գործ են կատարում՝ ճկմելով պոսայգիներով վազող այդ արագաշարժ միջատներին: Ինչ խոսք, դա անտեղյակության հետևանք է:

Գնայուկների հարյուրավոր տեսակներ կան, և այնուամենայնիվ, դրանց հեշտությամբ կարելի է ճանաչել: Նրանք օժտված են երկար ու ճարպիկ թաթերով և երկարով մարմնով, որն ունի կանաչագույնի, ոսկեգույնի ու մանուշակագույնի մետաղային երանգներ:

Դրանց մեծ մասը վրկվել է թռչելու ընդունակությունից: Բայց, դրա փոխարեն, նրանք ձեռք են բերել արագաշարժություն, որի շնորհիվ կարողանում են մեծ ավար ձեռք գցել: Այդ անխոչ որսորդները մտնելով խխունջների խեցիների մեջ ուտում են նրանց:

Գնայուկներն օժտված են նաև մի տարօրինակ հատկությամբ. ի-

րենց ետևից բաց են թողնում սրտխառնոց առաջացնող հոտով մի հեղուկ, որի շնորհիվ, երբեմն, փրկվում են թշնամուց:

Գնայուկների «խնամիները»՝ գեղամարմինները, առաջիններից տարբերվում են նրանով, որ ավելի մեծ են և, գլխավորապես, բնակվում են ծառերի վրա: Գեղամարմիններն ունեն մետաղային երանգ, իսկ թևերին՝ երկար բծեր: Նրանք սնվում են թրթուրներով, որոնք ոչնչացնում են սոճին և կաղնին:

Ահա մի փաստ, որն այնքան լավ բնորոշում է որոշ օգտակար միջատների դերը: Անցյալ դարում պատահականորեն Ամերիկա է տարվել թափառող շերամորդ: Իր ճանապարհին չհանդիպելով ոչ մի թշնամու նա այնքան արագ է բազմացել, որ այդ երկրի սոճու հիասքանչ անտառներին լիակատար ոչնչացման վտանգ է սպառնացել: Այդ արշավանքի առաջը կարող էին առնել միայն գեղամարմինները, որոնք, սակայն Ամերիկայում չկային: Այն ժամանակ ամերիկացիները դիկերներն արձագանքեցին այդ կոչին և այդ օգտակար միջատներից տոնաներով ուղարկեցին Ամերիկա, որտեղ նրանց անմիջապես ապահովություն տրվեց: Անողոր պայքարից հետո գեղամարմինները վերենականապես հաղթեցին թրթուրների հորդաներին, որոնք խժռում էին ծառերը: Անտառները փրկվեցին:

Այս օրինակը ցույց է տալիս, որ երբեք չպետք է արհամարհել բնության մեջ գոյություն ունեցող աննշմարելի օգնականներին: Շատ վնասակար միջատներ այժմ չեն կարողանում բազմանալ միայն այն պատճառով, որ նրանցով սնվում են այլ միջատներ: Այնպես որ օգտակար միջատների ոչնչացումը մեր բերքի թշնամիների գործունեության համար ապատ դաշտ է ըստեղծում:

Գեղամարմինների տեսակին պատկանող փարավոնամկներին և մյուններին կարելի է ճանաչել թափանցիկ թևիկների և շատ երկար

ու բարակ՝ իսկական «իշամեղվի իրանի» միջոցով: Դրանք պատկանում են «միայնակ», այսինքն գաղութից առանձնացած իշամեղունների խմբին: Ի տարբերություն գաղութներով ապրող իշամեղունների և մեղունների, նրանք չեն խայթում:

Միջատների այս ամբողջ խումբը չափավանց օգտակար է, քանի որ այն ոչնչացնում է հսկայական քանակությամբ թրթուրներ:

Բայց պետք է ասել, որ միայնակ իշամեղուններին չի կարելի շփոթել բոլորին հայտնի իշամեղունների հետ: Առանց կասկածելու կարելի է ասել, որ այն միջատները, որոնք ունեն չորս թափանցիկ թևիկներ, բարակ «իրան» և սուսերանման վերջավորությամբ երկար փոր, արժանի են պաշտպանության, որովհետև նրանք որդերի ու թրթուրների թշնամիներն են:

Իշամեղուններն ու մուգերը նույնպես իսկական գիշատիչներ են: Դրանում համոզվելու համար բավական է տեսնել, թե ինչպիսի մոլեգնությամբ նրանք վրա են պլոծնում սեղանին մնացած մսակտորի վրա: Նույն ագահությամբ նրանք հարձակվում են վնասակար միջատների, գերազանցապես ճանճերի վրա, խմոելով դրանց ահեղի քանակությամբ: Ցավոք, նրանք անուշադիր չեն նաև մրգերի (հատկապես հասածների) նկատմամբ: Եվ, վերջապես, նրանց ցավոտ խայթոցներն ամենևին էլ համակրանքի

տեղ չեն թողնում իրենց նկատմամբ:

Իսկ մեղունները գիշատիչներ չեն: Նրանք սնվում են գերազանցապես ծաղկափոշով և նեկտարով: Նրանք մարդու օգնակալներն են, քանի որ նստելով ծաղիկներին կատարում են մրգատու ծառերի փոշոտում և բեղմնավորում: Յուրաքանչյուր մեղու թռչելով ծաղկից-ծաղիկ օրական նստում է 4000 ծաղկի վրա: Եթե այդ քաջակորով մշակներն անհետանային, ապա ուրիշ ոչ մի մեքենայացված եղանակ չէր կարող փոխարինել նրանց աշխատանքը, էլ չենք խոսում այն մասին, որ մարդը կրկնվեր այնքան արժեքավոր մթերքից, ինչպիսին մեղուն է:


Սարդերը մյուս միջատներից տարբերվում են նրանով, որ վեցի-



փոխարեն ունեն ութ թաթիկներ: Նրանց նկատմամբ մենք երբևեց համակրանք չենք տածում և սարդերի՝ այդ հմուտ մանածագործների հայտնությունը միշտ տնտեսումների դժգոհության տեղիք է տալիս: Հակվիլ թե գտնվի մի միջատ, որն այնքան անհիմն հալածանքների ենթարկվի և, որն այնքան օգտակար լինի մարդուն որքան սարդն է:

Լինի դա խաչասարդ, որը մեր այգիներում երկրաչափական ճշտությամբ հյուսում է իր նրբագույն կտավները, թե տնային սարդ, որի ոստայնը կառուցում է առաստաղին, բոլորը սնվում են միջատներով՝ ճանճերով և մոծակներով: Չպետք է մոռանալ, որ ճանճերը մարդկության ամենամեծ չարիքն են: Նը-

րանք շատ հիվանդությունների տարածողներն են, այդ թվում այնպիսի վտանգավոր հիվանդությունների, ինչպիսիք են՝ տիֆը, դիֆտերիան, տրախոման և այլն: Հե-



տուաբար սարդերը արժանի են մեր երախտագիտությանը: Խոսքն, իհարկե, այն մասին չէ, թե քնա-կարանները չպետք է մաքրել ուստայներից, այլ այն մասին, որ չպետք է մոլեգնորեն ոչնչացնել այդ արժեքավոր օգնականներին այնտեղ, ուր նրանց ներկայությունը չի կարող խանգարել:

Համոզված կերպով կարելի է ասել, որ առանց բացառության բոլոր սարդերն էլ օգտակար են և նրանց չպետք է հալածել:

Անձրևաորդերը նույնպես գյուղատնտեսության օգնականներն են, բայց ոչ թե նրա համար, որ նրանք ոչնչացնում են վնասակար միջատներին, այլ հողի վրա թողած իրենց բարերար ազդեցությամբ: Հայտնի է, որ անձրևաորդերը գերազանցապես գտնվում են խոնավ հողում: Այդտեղ նրանք փորում են անցքեր, ուր ցեղեկները պատասպարվում են, որպեսզի միայն գիշերները դուրս գան գետնի երեսը: Նրանք մակերեսից հավաքում են սննդի մնացորդները և տանում իրենց ստորերկրյա խորշերը: Իսկ խորքից դուրս են նետում հողագնդիկներ: Անձրևաորդերի մասին կարելի է ասել, որ նրանք պաշտպանում են հողագործությանը՝ մակերեսային շերտերից դեպի խորք տանելով օրգանական մնացորդներ և դուրս նետելով հողի ստորին շերտերը:

Այդ անխոնջ աշխատանքը շատ ավելի բեղմնավոր է, քան կարելի է (Շարունակությունը 34-րդ էջում)

